



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՇՄԱՆՑՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԱՆԳՈՒՅԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

25 հոկտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի

թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչարյանի

Անդամակցությամբ՝ Ռ. Նազարյանի

Վ. Շովիաննիսյանի

Ուսումնասիրելով «ԲԻԿԱՎ» ՍՊԸ-ի անհավական դիմումով գործը քննության ընդունելու
մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Յ.

1. «ԲԻԿԱՎ» ՍՊԸ-ն 07.10.2013թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան: Դիմող
ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում նշել է, որ՝ «... ՀՀ
քաղաքացիական դարավարության օրենսգրքի 204.31-րդ, 204.33-րդ, 204.38-րդ
հոդվածների դրույթներում բացակայում է ինչպես լիազորության կամայական
իրականացումը կանխելու երաշխիքները, այդպես էլ այդ լիազորության ոչ իրավաչափ
իրականացումը հաղթահարելու միջոցը եւ իրավակիրառական պրակտիկայում դրան
դրված մեկնաբանությունը, որը դարձերվում է սահմանադրախրավական բովանդա-
կությունից եւ հնարավորություն չի ընձեռում նոր հանգամանքներով գործը վերանայելու
միջոցով ապահովել ընկերության խախտված սահմանադրական իրավունքի վերա-
կանգնումը», եւ խնդրել է վերոհիշյալ հոդվածների դրույթները ճանաչել ՀՀ

Սահմանադրության 1-ին, 3, 6, 18, 19, 92, 93 եւ 94-րդ հոդվածների պահանջներին հակասող:

2. Դիմողը գրնում է, որ իրավակիրառական պրակտիկայի արդյունքում սահմանափակվել է «ԲԻԿԱՍ» ՍՊԸ-ի՝ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների ու ազարությունների ապահովման եւ պաշտպանության, ազար իրականացման հնարավորությունը: Ըստ դիմողի՝ ՀՀ սահմանադրական դարարանի որոշումները չեն դարձել «ԲԻԿԱՍ» ՍՊԸ-ի իրավունքի դարական պաշտպանության միջոց, քանի որ ՀՀ վճռաբեկ դարարանը կամայական եւ ոչ իրավաչափ համարել է, որ նոր հանգամանքի հիմքերը բացակայում են ներկայացված բողոքներում:

3. Ենելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ դեկավարվելով «Սահմանադրական դարարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով, դարական կազմը գրնում է, որ վերոհիշյալ դիմումով գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետեւյալ պարճառաբանությամբ.

ա/ Վիճարկելով վերոհիշյալ նորմի սահմանադրականությունը՝ դիմողը չի ներկայացրել պարշաճ իրավական հիմնավորումներ դրա հակասահմանադրականության վերաբերյալ: ՀՀ սահմանադրական դարարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արդահայքել այն մասին, որ «Սահմանադրական դարարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհարական դիմումի ընդունելիության հավելյալ պարփառիր պայման, ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պեսք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հարկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որեւէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը նաեւ չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախվել, ինչպես նաեւ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախվման փասդի եւ վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջեւ պարճառահետքեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դարարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ սահմանադրական դարարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արդահայքած իրավական դիրքորոշման՝ անհարական դիմումն ակնհայր անհիմն համարելու հիմք է.

թ/ դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքները նրա նկարմամբ կայացված համապարախան դարպական ակդերի արդյունք են, հեգելաքար, խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել վերոհիշյալ նորմերի հակասահմանադրականության վիճարկմամբ։ Փաստորեն դիմողը, ծեսականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց, որն էլ, համաձայն ՀՀ սահմանադրական դարպարանի՝ 2009 թվականի մարգի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արդարացնում է իրավական դիրքորոշման, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ծեսականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դարպարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դարպարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ։

գ/ ՀՀ քաղաքացիական դարպավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի դրույթի վերաբերյալ առկա է ՍԴՈ-984 որոշումը, հեգելաքար՝ այս առումով առկա է անհարական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու «Սահմանադրական դարպարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով նախադեսված հիմք։

դ/ դիմումին կից ներկայացված ՀՀ վճռաբեկ դարպարանի՝ 23.04.2013թ. որոշման ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դարպավարության օրենսգրքի 204.31-րդ և 204.38-րդ հոդվածներն իր նկարմամբ չեն կիրառվել։ Դիմողի նկարմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիրացված դարպարանի կողմից վիճարկվող դրույթի կիրառումը՝ որպես անհարական դիմումին ներկայացվող պայման, ի թիվս այլնի, նախադեսված է «Սահմանադրական դարպարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով։ ՀՀ սահմանադրական դարպարանի՝ 2009 թվականի մարգի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արդարացնում է իրավական դիրքորոշման համաձայն՝ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհարական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դարպարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ։

Ելնելով վերոշարադրյալից և դեկավարվելով «Սահմանադրական դարպարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դարպարանի թիվ 1 դարպական կազմը

Ա Ր Ո Շ Ե Ց.

«ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի անհարական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

25 Խոկտեմբերի 2013թվականի
ՍԴԿՈ/1-27